Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Օրգովի Արբի Թրպանճյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
1.դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի
2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3.անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (Ձև 5),

6.այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.որակավորման տարակարգ ունենալու դպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթրի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մայիսի 23-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հունիսի 8–ին՝ ժամը 14:00-ին,** Օրգովի Ա. Թրպանճյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Արագածոտնի մարզ, գ. Օրգով, 2-րդ փողոց, շենք 1-ին: Տեղեկությունների համար զանգահարել 093-26-06-41 հեռախոսահամարով: